РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЗАО «ЕРЕВАНСКИЙ ЗАВОД МАТЕМАТИЧЕСКИХ МАШИН»

REPUBLIC OF ARMENIA
«YEREVAN PLANT OF MATHEMATICAL MACHINES» CJSC

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

0033, РА, г. Ереван, ул. А. Акопян 3, тел/факс: +374 10 22 65 02

0033, ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3, հեռ/ֆաքս՝ +374 10 22 65 02

0033, RA, Yerevan, H. Hakobyan 3 str.
tel/fax: +374 10 22 65 02
ervmmg@gmail.com

№ 352
25 դեկտեմբերի 2024թ.

«ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՈՎԱՅԻՆ

(Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 1 փկղ., 142., 147 բն

Էլ. փոստ՝ tenderprollc@gmail.com)

Հարգելի տիկին Մարգարովա.

«Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ-ի կարիքների համար ջրի պոմպի ձեռքբերման նպատակով «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ-ի և «Տենդեր Պրո» ՍՊԸ-ի միջև 2024թվականի օգոստոսի 23-ին կնքվել է՝ ԵՐՄՄԳ-ԷԱՃԱՊՁԲ-ՊՈՄՊ-2024 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր: Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-ն պարտավորվել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և տվյալ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:Մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 10.10.2024թ: 19.12.2024թ գրությամբ ծանուցվել է Ընկերությանը մինչև 23.12.2024թ ժամը 16:00 տրամադրելով ժամկետ ապրանքի մատակարարման համար, նշելով, որ չմատակարարման դեպքում համաձայն 2.1.7 կետի պայմնագիրը միակողմանի կլուծվի: Ընկերության կողմից վերը նշված ծանուցմանը

արձագանք չի եղել: Փաստացի համարվում է, որ Ընկերությունը հրաժարվում է ապրանքի մատակարարումից: Համաձայն պայմանագրի 2.1.1 կետի Պատվիրատուն իրավունք ունի լրիվ կամ մասնակի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողը էականորեն խախտել է մատակարարման ժամկետը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:
Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի, պայմանագրի 2.1.7 կետի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը, 466-րդ հոդվածի 3-րդ մասը «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ-ն 2024թ. դեկտեմբերի 25-ից ամբողջությամբ և միակողմանի լուծում է վերը նշված պայմանագիրը:

Մաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի դ/ մասի և Ձեր կողմից ներկայացված ԵՐՄՄԳ-ԷԱՃԱՊՁԲ-ՊՈՄՊ-2024-1 պայմանագրի ապահովման 140000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովման 210000 (երկու հարյուր տասը հազար) ՀՀ դրամ գումարների չափով, տուժանքի համաձայնագրերի 1.6 կետի համաձայն տուժանքի համաձայնագրերը և կից պահանջագրերը կներկայացվեն Ձեր ընկերությանը սպասարկող բանկին: <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի պայմանագրերը ամբողջությամբ և միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում:
Տեղեկացնում եմ, որ «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-ն ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ–ի 1570013006700100 հաշվեհամարին փոխանցել 30391.2 ՀՀ դրամ, որպես տույժ (պայմանագրի 6.2 կետի համաձայն):
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով

սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում եմ, եթե մինչև 2025թվականի հունվարի 7-ը Ձեր կողմից վճարվի վերը նշված 140000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ պայմանագրի կատարման ապահովման և 210000 (երկու հարյուր տասը հազար) ՀՀ դրամ որակավորման ապահովման գումարները, ապա «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ-ի 1570013006700100 հաշվեհամարին և վճարման կտրոնների բնօրինակները մինչև 2025թվականի հունվարի 7-ը ներառյալ ներկայացնել «Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ՝ Հ.Հակոբյան 3 հասցե, 4-րդ հարկ, «Գնումների և մատակարարման» բաժին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՌԱՖԱՅԵԼ ՍԱՀԱԿՅԱՆ